ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ

««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՏՈՒԿ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 91-րդ հոդվածի 7-րդ մասը՝

Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

1. ««Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի քննարկման համար սահմանել հետևյալ ընթացակարգը.

1) մինչև 5 րոպե տևողությամբ հիմնական ելույթով հանդես է գալիս հիմնական զեկուցողը.

2) հիմնական և հարակից զեկուցողին հարցեր տալու համար սահմանվում է հետևյալ ժամանակացանկը.

ա. հարցերի համար՝ մեկական րոպե,

բ. հարցերին պատասխանելու համար՝ երկուական րոպե,

գ. հարցերին և պատասխաններին արձագանքելու համար՝ մեկական րոպե.

3) մտքերի փոխանակության համար հատկացվում է երկուական րոպե.

4) հայտ ներկայացնելու դեպքում մինչև 2 րոպե տևողությամբ ելույթ է ունենում խմբակցություններից մեկական ներկայացուցիչ.

5) մտքերի փոխանակությունն ավարտվում է հիմնական զեկուցողի՝ մինչև 3 րոպե տևողությամբ եզրափակիչ ելույթով.

6) մտքերի փոխանակությունն ավարտվելուց հետո նիստը նախագահողը հայտարարում է նախագծի քննարկման ընդմիջում առնվազն 24 ժամ՝ նախագծի

վերաբերյալ գրավոր առաջարկներ ներկայացնելու համար:

2. ««Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի քննարկման վերսկսումը կազմակերպել սույն որոշման առաջին մասի 6-րդ կետով սահմանված ժամկետի ավարտից հետո:

3. ««Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի քննարկման վերսկսման համար սահմանել հետևյալ ընթացակարգը.

1) մինչև 5 րոպե տևողությամբ հիմնական ելույթով հանդես է գալիս հիմնական զեկուցողը՝ նախագծի վերջնական տարբերակը և առաջարկությունների ամփոփաթերթիկը ներկայացնելու համար.

2) նախագծի վերաբերյալ առաջարկ ներկայացրած պատգամավորների կողմից հարցեր տալու համար սահմանվում է հետևյալ ժամանակացանկը.

ա. հարցերի համար՝ մեկական րոպե,

բ. հարցերին պատասխանելու համար՝ երկուական րոպե,

գ. հարցերին և պատասխաններին արձագանքելու համար՝ մեկական րոպե.

3) հայտ ներկայացնելու դեպքում մինչև 2 րոպե տևողությամբ կարող են ելույթ ունենալ առաջարկություն ներկայացրած պատգամավորները, խմբակցություններից մեկական ներկայացուցիչ, Ազգային ժողովի նախագահը և տեղակալները.

4) մտքերի փոխանակությունն ավարտվում է հիմնական զեկուցողի՝ մինչև երեք րոպե տևողությամբ եզրափակիչ ելույթով:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

2024 թվական, նոյեմբերի 12
Երևան

ԱԺՈ - 798 - Լ